ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

02 ապրիլի 2026 թվականի թիվ 31-Ա

ք. Երևան

«ԷՅՉՆԵԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՅՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի մարտի 09-ին սեփական նախաձեռնությամբ հարուցված թիվ 3 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովի կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) իրեն վերապահված վերահսկողական գործառույթներն իրականացնելիս արձանագրվել է «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ ցանցային օպերատոր կամ Ընկերություն) կողմից առանց համապատասխան իրավական հիմքերի՝ պայմանագրերի, տեսալսողական ծրագրերը վերահաղորդելու Օրենքի դրույթների պահանջի առերևույթ խախտման հատկանիշներ:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2026 թվականի մարտի 04-ի թիվ 9-Ա հրամանի հիման վրա օպերատորների գործունեության տեղում դիտարկման արդյունքների վերաբերյալ 2026 թվականի մարտի 09-ին կազմված արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, 2026 թվականի մարտի 09-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է թիվ 3 վարչական վարույթը:

Համաձայն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի՝ Արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես ապացույց:

Արձանագրությանը ծանոթացել և այն տեղում ստորագրել է ցանցային օպերատորի ներկայացուցիչ՝ «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերության տնօրեն Արսեն Խաչատրյանը և վերջինիս վերաբերյալ առարկություններ չի հայտնել:

Ըստ Արձանագրության՝ «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերության կողմից վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի դիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են հետևյալ տեսալսողական ծրագրերը՝ «Кто есть кто», «НТВ Мир», «Рен ТВ», «СТС», «Звезда», «Перец», «5-ий Канал», «Домашний», «Кинохит», «Киносемья», «Кинокомедия», «Наше новое кино», «Мужское кино», «Кинопремьера», «Индийское кино», «Дом кино», «Дом кино премиум», «Amedia premium», «Победа», «Время.», «НТВ сериал», «НТВ право», «НТВ стиль», «Eurosport 1», «Eurosport 2», «Матч планета», «Бокс ТВ», «Авто плюс», «KHL», «Discovery Channel»,

«ID», «Animal planet», «Amedia 1», «Zoo TV», «Еврокино», «Охотник и Рыболов», «TLC», «3Ж», «Муз TV», «Bridge TV», «Шансон ТВ», «FON music», «Amedia 2», «Карусель», «Телекафе», «Киносвидание», «Киносерия», «Ностальгия», «Живи», «Amedia Hit», «Бобёр», «Киномикс», «Киноужас», «СуперГерой», «Мужской», «О!», «Поехали!», «Оружие», «365», «Родное кино», «Индия» «MMA-TV!»:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից իրականացվել է Ընկերության գործունեության մշտադիտարկման արդյունքների Արձանագրությունում նշված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի և ցանցային օպերատորի կողմից 2025 թվականին Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկի համադրություն, որի արդյունքում պարզվել է, որ «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում, բացի փաստացի վերահաղորդվող ծրագրերից, առկա են նաև «Музыка Первого», «Кухня», «Ля-минор ТВ», «ТНТ Music», «Глазами туриста HD», «Точка.РФ («HD Life/HDL»)», «КВН ТВ», «Живая Природа», «Живи активна», «KinoLiving («КиноЛивинг»)», «Լայֆ Հաք», «Կինոման», «Հայ TV», «Թավա TV», «Խաղալիք», «ABN/Armenian Business News/», «Բազմոց TV», «Ֆիթնես TV», «Մուզզոն», «ԲՐԻՋ ՏՎ Ռուսկիյ Խիտ («BRIDGE TV Русский хит»)», «ԲՐԻՋ ՏՎ հիթս («BRIDGE TV Hits»)», «ՌԲԿ («РВК»)», «Food Networq HD», «Cartoon Network HD», «Cartoonito», «CNN HD», «Россия-24», «Romance», «Загородный SD», «Телепутишествия SD», «Спортивный («ТВ Спорт»)» և «Арсенал («Arsenal»)» տեսալսողական ծրագրերը, որոնք արձանագրությունը կազմելու պահին չեն վերահաղորդվել, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները:

Միաժամանակ պարզվել է, որ «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերության կողմից 2026 թվականի մարտի 9-ի դրությամբ փաստացի վերահաղորդվող բոլոր տեսալսողական ծրագրերի գործողության ժամկետն Ընկերության կողմից ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում նշագրված է «01.01.2025-31.12.2025 (երկարաձգվող չէ)»:

Վերոնշյալը պարունակում է Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով սահմանված պահանջների առերևույթ խախտման հատկանիշներ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2026 թվականի մարտի 11-ին թիվ Ե/04/04.1/191-26 գրությամբ ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Ցանցային օպերատորը վերոնշյալ գրության վերաբերյալ 13.03.2026թ. ներկայացրել է պարզաբանում, որով հայտնել է, որ վերը նշված ծրագրերի պայմանագրերն առկա են, և դրանք վերահաղորդվում են պայմանագրերի հիման վրա:

Ցանցային օպերատորը վերոնշյալ պարզաբանմանը կից Հանձնաժողովին տրամադրել է

1. «ՖԻԼՄՍ.ԱՄ» ՍՊ ընկերության և «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերության միջև 25.12.2024թ. կնքված N Էյչնեթ-2025 պայմանագիրը,

2. 30.12.2025թ. թիվ 007-01/26 լիցենզիոն համաձայնագիրը,

3. «ԹԻ ՎԻ ԿՈՆՏԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության և «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերության միջև 01.01.2026թ. կնքված N 02 պայմանագիրը,

4. «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության և «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերության միջև 25.12.2023թ. կնքված տեսալսողական ծրագրերի վերահեռարձակման թույլտվության

մասին թիվ VMT-01/26-2024 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 25.12.2025թ. թիվ Հ2 համաձայնագիրը:

Միաժամանակ ցանցային օպերատորը 16.03.2026թ. Հանձնաժողով է ներկայացրել «ԷՑՉՆԵԹ» ՍՊ ընկերության կողմից վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ամբողջական ցանկը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ, 9-րդ և 11-րդ մասերը սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

11. Մշտադիտարկման արդյունքների մասին արձանագրությունն ուղղակի դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է մշտադիտարկում իրականացրած անձը, իսկ օպերատորի մոտ տեղում դիտարկում իրականացնելու դեպքում ստորագրում է կարգավորող պետական մարմնի և օպերատորի ներկայացուցիչը:»:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը սահմանում են.

«1. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

5. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:»:

Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով, այսուհետ՝ իրավատեր) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Նույն օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի վերաբերյալ ցանցային օպերատորի կողմից ներկայացված պարզաբանումները, ինչպես նաև բոլոր տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի վերաբերյալ կնքված պայմանագրերն ու ժամկետի երկարաձգման վերաբերյալ համաձայնագրերը.

Ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերության կողմից

1. «ՖԻԼՄՍ.ԱՄ» ՍՊ ընկերության և «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերության միջև 25.12.2024թ. կնքված N Էյչնեթ-2025 պայմանագրի թիվ 1 Հավելվածի համաձայն՝ ցանցային օպերատորը մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն իրավունք ունի վերահաղորդել հետևյալ տեսալսողական ծրագրերը՝ «Охотник и Рыболов HD», «Загородная жизнь», «Телепутешествия SD», «Зоо ТВ SD», «Спортивный (ТВ Спортб логотип "ТВ Спорт")»,«Арсенал (Arsenal)», «Еврокино», «Шансон ТВ», «Муз»:

2. Թիվ 007-01/26 30.12.2025թ. կնքված լիցենզիոն համաձայնագրի համաձայն՝ ցանցային օպերատորը մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն իրավունք ունի վերահաղորդել հետևյալ տեսալսողական ծրագրերը՝ «Первый Канал. Всемирная Сеть» «Дом кино», «Дом Кино Премиум», «Музыка Первого», «Время.далекое и близкое», «ТЕЛЕКАФЕ», «Карусель International (Karusel international)», «Бобёр», «ПОБЕДА», «О!», «Поехали!», «AMEDIA 1 HD», «AMEDIA 2 HD», «AMEDIA PREMIUM HD», «AMEDIA HIT HD», «Мужской», «Загородная жизнь», «КИНОУЖАС», «Оружие», «Матч! планета», «КИНОПРЕМЬЕРА», «Кинохит», «КИНОСЕМЬЯ», «КИНОМИКС», «Мужское кино», «Наше новое кино», «Телеканал KHL (KHL TV Channel)», «БОКС ТВ ПЛЮС», «КИНОКОМЕДИЯ», «ИНДИЙСКОЕ КИНО», «Кухня» «Авто Плюс», «МУЗЫКА LIVE» «КИНОСВИДАНИЕ», «КИНОСЕРИЯ», «Телеканал ''Ностальгия''», «ЖИВИ», «СуперГерои», «365 дней ТВ», «РОДНОЕ КИНО», «ТОЧКА РФ», «Индия», «MMA-TV.COM», «Телеканал ''Кто есть кто''», «КВН ТВ», «Глазами туриста (HD)», «Живая природа», «Живи Активно», «KinogoLiving (КиногоЛивинг)», Big Planet (Биг Планэт), «FON music»:

3. «ԹԻ ՎԻ ԿՈՆՏԵՆՏ ՍԵՐՎԻՍ» ՍՊ ընկերության և «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերության միջև 01.01.2026թ. կնքված N 02 պայմանագրի թիվ 1 Հավելվածի համաձայն՝ ցանցային օպերատորը մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն իրավունք ունի վերահաղորդել հետևյալ տեսալսողական ծրագրերը՝ «СТС», «Домашний», «Рен ТВ», «Перец», «5 Канал», «СТС Кидс», «Известия», «Bridge TV», «Bridge TV Русский Хит», «Bridge TV Hits», «Bridge

TV DELUXE», «Bridge TV FRESH», «Bridge TV Classic», «Bridge TV ШЛЯГЕР», «Baby Time»:

4. «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության և «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերության միջև 25.12.2023թ. կնքված տեսալսողական ծրագրերի վերահեռարձակման թույլտվության մասին թիվ VMT-01/26-2024 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 25.12.2025թ. թիվ Հ2 համաձայնագրի համաձայն՝ ցանցային օպերատորը մինչև 31.12.2027թ. իրավունք ունի վերահաղորդել հետևյալ տեսալսողական ծրագրերը՝ «Discovery Channel», «Animal planet», «Food Network HD», «TLC», «Eurosport 1», «Eurosport 2», «ID (Discovery Investigation)», «HGTV HD», «Cartoon Network HD», «Cartoonito», «CNN HD», «НТВ Мир», «НТВ сериал», «НТВ право», «НТВ стиль», «Россия-24», «Звезда HD», «Romance», «Мосфильм. Золотая Коллекция (международная версия)», «Настоящее страшное телевидение (НСТВ)», «Fashion TV HD»:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ ցանցային օպերատորը չի խախտել Օրենքի դրույթները, և բոլոր տեսալսողական ծրագրերը վերահաղորդվել են համապատասխան պայմանագրերի և դրանց ժամկետների երկարաձգման համաձայնագրերի հիման վրա:

Քննարկվող համատեքստում հատկանշական է, որ ցանցային օպերատորը 2025 թվականից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ ՝ սփռման տարածքը՝ ՀՀ, լիցենզիայի գործողության ժամկետը՝ 06.06.2025թ.-06.06.2035թ., սերիան և համարը՝ ԿՀ N 365 :

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ ցանցային օպերատորը տեսալսողական ծրագրերը վերահաղորդել է համապատասխան իրավունքը հավաստող փաստաթղթերի՝ պայմանագրերի և դրանց ժամկետների երկարաձգման համաձայնագրերի առկայությամբ՝ ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 3 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1 վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»

օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերության նկատմամբ 2026 թվականի մարտի 09-ին հարուցված թիվ 3 վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԷՅՉՆԵԹ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.ՀԱԿՈԲՅԱՆ**

2026թ. ապրիլի 02
ք.Երևան